

Հարց 1 Ինչպե՞ս է որոշվել ներտնային գազասպառման համակագերի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման սակագինը՝ 2 270 ՀՀ դրամը:

Պատասխան 2270 ՀՀ դրամ գործող սակագնի որոշումը կայացվել է «Արցախգազ» ՓԲԸ հայտի քննարկման, ուսումնասիրության, համապատասխան հաշվարկներ և առաջարկված սակագինը նվազեցնելու արդյունքում:

Հարց 2 Ինչու՞ է ներտնային գազասպառման համակագերի տեխնիկական սպասարկման սակագինը նույնը բոլոր տեսակի գազասպառման սարքավորումների համար, չէ՞որ նրանցից յուրաքանչյուրը պահանջում է սպասարկման առանձնահատուկ մոտեցում:

Պատասխան Բոլոր տեսակի գազասպառման սարքավորումների համար սակագինը նույնն է, քանի որ ներտնային գազասպառման համակագերի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման մասին Պայմանագրի հավելված N 2-ի 2-րդ կետով ծառայության մատուցումը (և դրա արժեքը) ընդհանրական է բոլոր սարքավորումների նկատմամբ, անկախ սարքավորումների առանձնահատկություններից:

Հարց 3 Եթե գազասպառման սարքավորումներից որևէ մեկը տարվա մեջ օգտագործվում է միայն որոշակի ժամկետով (օրինակ՝ 3 ամիս), ապա արդյո՞ք տվյալ սարքավորման տեխնիկական սպասարկման դիմաց տարեկան ևս գանձվում է 2 270 ՀՀ դրամ կամ կիսամյակային՝ 1 135 ՀՀ դրամ:

Պատասխան Սարքավորումներից որևէ մեկը տարվա ընթացքում չափազործման մեջ չգտնվելու դեպքում, տվյալ սարքավորման տեխնիկական սպասարկման համար վճար չի գանձվում, եթե կազմվել է ակտ՝ համաձայն Պայմանագրի 4-րդ կետի 11-րդ ենթակետի: Տվյալ չաշխատող սարքավորումը աշխատանքի դնելու (օգտագործելու) դեպքում, կիրականացվի այդ սարքավորման տեխնիկական սպասարկում և Պայմանագրի N2 հավելվածի 8-րդ կետի համաձայն՝ տեխնիկական յուրաքանչյուր սպասարկման համար մաժանորդը կվճարի Հանձնաժողովի կողմից սահմանված տարեկան վճարի 50% :

Հարց 4 Արդյո՞ք, ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայություններից օգտվելը պարտադիր է:

Պատասխան Այո, ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայություններից օգտվելը պարտադիր է՝ ԳՍՕԿ-ի 14-րդ, 15-րդ կետերի համաձայն:

Հարց 5 Արդյո՞ք նշված ծառայություններից օգտվելու համար կնքվող Պայմանագիրը կապված է բնական գազի մատակարարման Պայմանագրի կնքման հետ:

Պատասխան Այո, այդ կապը առկա է, քանի որ գազամատակարարման Պայմանագիրը մատակարարի և բաժանորդի միջև կնքված գազի մատակարարման պայմաններն են, այդ թվում՝ ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման պայմանները՝ համաձայն ԳՍՕԿ-ի 1-ին կետի 12-րդ ենթակետի: